



Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 43

ՏԱՐԱԹ

22 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1905

Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ	ԳՈՒՍՈՒՑ ՀԱՄԱՐ	ԱՐՏԱՍՈՂՄԱՆԻ
Տարեկան 50 ՂԲԸ	Տարեկան 54 ՂԲԸ	Տարեկան 42 ՖԲ.
Վեցամսեայ 25 »	Վեցամսեայ 27 »	Վեցամսեայ 6 »

ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍՅԱՆ ԵՒ ԸՆԿ

ՄԵԾ ՎԱԿԱՆՈՒՄՆԵՐՆԵՐ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՈՅՅՆԵՐՈՒ, ՇՂԹԱՅՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԻՆԱՅ

Կ. Պոլիս, Ճեղաղ Պեյ խանին սակ, Թիւ 16

Մասնաւորապէս կը խնդրուի ուղադրութիւն ընել ՍԱՐԳԻՍՅԱՆ անունը կեղծող կարգ մը նորեկուկ ժամացոյցներուն որոնք հրապարակի վրայ կը շրջին:

ՍԱՐԳԻՍՅԱՆ ժամացոյցները ջերմապէս կը յանձնարարութիւն ինչպէս նաեւ ԶԵՆԻԹԸ՝ քե՛ Կ. Պոլիս, եւ քե՛ Գաւառները, ուրկէ եղած յանձնարարութիւնք անմիջապէս կը կատարուին գոհացուցիչ պայմաններով:

Ծանօթ. — ԶԵՆԻԹ ժամացոյցները Բարիզի 1900 Արուեստահանդէսին մէջ ամենեւնի բարձր պարգեւին արժանացած են:

Հատոր 40 փարսա

ԱՐՏՈՆԱՏԷՐ — ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

(آ. آصاوریان) شرکت مرتبه مطبعه سی — باب عالی جاده سنده نومرو ۵۲

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍՏՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապը-Ալի հասցեայի քիւ 52



BOVININE

ՊՕՎԻՆԻՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԸՆՏԻՐ ՍՆՈՒՆԴ

ՓՈԹՐ ՏՂԱՅՈՑ

ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ

ԵՒ ԾԵՐԵՐՈՒ

Bovinine կը պարունակէ զուտ սննդային մասերն եղան մսին, ուղեղին, ողնուղեղին և ֆոսֆաթներն ոսկրային կազմուածքին, խտացեալ վիճակի մէջ :

Պոլիս նոր բերուած այս անշուգական կազդուրիչ դեղը, 27 տարիներէ ի վեր ծանօթ և գնահատուած ընդհանուր Ամերիկայի, Անգլիոյ, Ճաբոնի և Չինու համաբաւոր բժիշկներէն . շերմապէս կը յանձնարարուի ամէն անոնց՝ որոնք կ'զգան «ուժասպառութիւն, դալկութիւն, անախորժութիւն, ստամոքսի խանգարում, ընդհանուր ջղային տկարութիւն, նիհարութիւն, կուրծքի տկարութիւն, անախորժութիւն » :

Անգամ մը գործածութիւնը կը հաստատէ իր անշուգական յատկութիւնը :

Ընկերութեան միակ ներկայացուցիչը ԱՐԴԱՐԵԱՆ ԵՂԲԱՐԲ, Պահճէ-գաբու, Օսմանեան նամակատան ետեւի կողմը : Կը գտնուի նաև ամէն նշանաւոր դեղարաններու և դեղորէից մթերանոցներու քով :



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 43

ԾԱԲԱԹ

22 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1905

ԲՈՎԱՆԴԱՆՈՒԹԻՒՆ

Թերթը եւ ընթերցողը. — Վ. ՓԱՓԱԶԵԱՆ: Աղեփանդր Փանոսեան (եւ իր շուսանկարը) ԵՐՈՒԱՆԴ ԾԻԻ ՀԷՐԵԱՆ: Քննադատ օրագիր. — ԱՇՈՏ ՔԻԹԱՊՃԵԱՆ: Մրսակցական նամականի. — ԹԱԳՈՒՀԻ: Իմ մահը. — Ե. ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ: Իմ օրագիրս. — ՊԵԱԴՐԻՍ ԾԱՀԻՆԵԱՆ: Աղբիկը մօրը գործիքը. — Վ. Փ.: Վերլուծում. — (ՈՏԱՆԱՆՈՐ) ՍՏԵՓԱՆ ԽԱԶՈՒՆԻ: Շաբթուան յուրեր:

ՕՐԱԹԵՐԹԸ ԵՒ ԸՆԹԵՐՑՈՒՄԸ

Քնուրանալի ճշմարտութիւն մ'է թէ, ինչպէս դպրոցը պատկերուն նոյնպէս լաւ կալմակերպուած թերթ մ'ալ չափահասներու և գործի մարդոց վարժարանն է, ուր ամէն կարգի անհատ անոր մէջէն կը քաղէ իր խառնուածքին, գործին և կրթութեան համապատասխան և պիտանի գիտելիքները, հիւթը վերջապէս:

Այսօր հասարակութիւնը կը վայելէ օրաթերթերու և պարբերականներու ճոխ հաւաքածոյ մը, որոնք գրամական ոչինչ գումարի մը փոխան կը ծախուին ամէն օր, ամէն շաբթու: Սակայն ո՞ր թերթը և ո՞ր պարբերականը պէտք է ժողովուրդին ընթերցանութեան համար, ահա էն նկատելի կէտը, զոր ոչ ոք կը խորհի թերեւս:

Պարբերական հանդէսի մը մէջ մրցակիցներու վրայօք խօսիլը կենցաղապիտական ինչ ինչ անպատեհութիւններու համար, հոս բացայայտ կերպով պիտի խօսինք ըստ կարելոյն օրաթերթերու վրայ:

Ձկայ դրաղում այնքան նուրբ այնքան ճաշակի խնդիր, որչափ օրաթերթի մը մեխանիզմը, յօդուածները կը գրուին, օրը օրին լուրերը կը հաղորդուին, թղթակցութիւնք կը հասնին հեաղհետէ, և սակայն ասոնք բոլորը շարագասի, և *présentable* վիճակի մը մէջ հրատարակելը ամէն հաւանութիւն գործը չէ:

Թերթին չորս սպիտակ էջերը դիւրաւ կը լեցուն զրաշարներու ճարտար մասներով, սակայն ընթերցող հասարակութեան միտքը լեցնելը . . . that is the question!

Կը սխալի՞մ աւրեօք երբ այս առթիւ յիշատակութիւնը ընեմ Բիւզանդ Բէչեանին, որուն կարողութիւնը վարած թերթէն դատելով անժխտելի է պէտք է ըսել:

Բիւզանդիոն այն միակ օրաթերթն է որ կրնայ յանձնարարուիլ ամէն կարգի ընթերցողներու: Այսօր ժողովուրդը համալուած ըլլալով անոր գերագոյն առաւելութեան վրայ, երեկոյին կսպասէ նոյն իսկ քսան փարայի զոհողութեամբ մը կարգաւ Բիւզանդիոնը և անոր վարչը Բիւզանդ Բէչեանը:

Բէչեան — գովասանք չըլլայ ըսել — այսօր ի վիճակի է ՄինԱկը լեցնել թերթը, անոր բոլոր մանրամասնութիւններով: Ահա ճշմարիտ և անկողմնակալ խոստովանութիւն մը իր հասցէին, զոր կրնան հաստատել բոլոր զինքը մօտէն ճանչցողները:

Ձեմ գիտեր ի՞նչ հով մը կայ ժողովրդական այդ օրաթերթին վրայ որ կը քաշէ կ'ստիպէ հանրութիւնը գնահատել և առաջնութիւն տալ անոր ուղղութեան ինչպէս նաև բովանդակութեան կրկնակ տեսակէտներով:

Բիւզանդիոն կը հրատարակուի Բէչեան հարազատներու օժանդակութեամբ: Մաքուր, անկողմնակալ և պատուաւոր լրագրութեան առաւելութիւնը սիրող խմբագրապետը՝ իր զաւակները բոլորած իր շուրջը կը վարէ գործը, գործ մը որ ներկայ վիճակին մէջ մրցակից չունի անաչառաբար խօսելով:

Այս տողերը գրելովս չեմ խորհրդ ռեֆլաւը ըրած ըլլալ, արդէն քաջածանօթ ճշմարտութեան և յաջողութեան մը, բայց իբր անկողմնակալ պաշտօնակից, պարտ անձին կը համարիմ խօստովանիլ ճշմարտութիւնը և օրինակ ըլլալ ամէն անոնց որոնք զիրար չի քաշելու, զիրար վարկազուրկ ընելու տրշայ բնոյթը կը սնուցանեն իրենց մէջ:

Արդ՝ եզրակացնել պէտք է թէ՛ գործի մը յաջողութիւնը, երէք էական սկզբունքներով ձեռք կուգայ, կարողութիւն, խնայողութիւն եւ յարստութիւն, և պէտք է ըսել որ Բիւզանդ Բէչեան մարմնացումն է այս երեք գովելի առաւելութեանց, որոնց շնորհիւ այսօր մենք իբր պաշտօնակից պարտ անձին կը համարինք հրապարակել:

Վ. ՓԱՓԱԶԵԱՆ



ՍՂԵՔՍԱՆԻՐ ՓԱՆՈՍԵԱՆ

Հանձուրներ կան որոնք գիտաւորներու շատ կը նմանին, հազուադէպ եւ յանկարծական է անոնց երեւումը եւ այդ հրաշափառ դէպքին ականատեսները միշտ պարծենալով կը յիշեն զայն վայելած բոլորին։ Աղեքսանդր Փանոսեան այդ հանձուրներէն է։

Թէեւ մէջ տասը իր քերթումները կը կարդանք անտարբերութեամբ, ու շատ անգամներ ալ մեր քննադատութեանց ենթակայ կ'ընենք, սակայն ապահովապէս ասորինք ետքը, երբ անիկա երթայ հանգչիլ Դուրեաններու, Պէշիկթաշեաններու քով, այն ատեն պարծանքով պիտի յիշենք իր ժամանակակիցը, իր գործունէութեան ականատեսը բլաշիս։ Արդէն մեր մէջ գրական արտագրութիւններ այն ատեն միայն կը գնահատուին, երբ անոնց հեղինակը մեռած է։ Ես անանկ կը հաւատամ որ Դուրեանի «Տրտունջը» հրատարակող խմբագիրը եւ զայն առաջին անգամ կարդացող բանիմաց գրագէտներ երբեք չեն կրցած մտածել թէ այդ վեպն ինչպէս ծնունդ առնուած է։ Եւ պիտի հայ գրականութեան հետ ու պիտի ապրեցնէ իր թշուառ հեղինակը։ Մեզի համար, ժամանակը միայն կ'անայ նուիրագործել արժանիքները։

Աղեքսանդր Փանոսեան կրնայ ունենալ իր հակառակորդները ու նախանձորդները

— պարագայ մը որմէ երբեք զերծ չկրնար ըլլալ ամէն գործի վրայ գտնուող դրացի — որոնք առիթը չեն փախցնելու զայն վարկաբեկ ընելու։ ասով հանգերձ Փանոսեան այն հանձարներէն է որոնք դարադաշտներ կը կազմեն գրականութեան մէջ։ Մենք շատ անգամ կը հաւնինք ու կը թարգմանենք միջակ ոտանաւորներ ու չենք կրնար գնահատել Փանոսեանի գրածները։ Հիմա զայն քննադատողներ, անոր արժանիքը ուրացողներ ապահովաբար անոր քանի մը տոտնեակ ոտանաւորները հայերէնի պիտի թարգմանէին եթէ անիկա Գաղղիացի մը ծնած լիլար։

Մեր մէջ այն միակ բանաստեղծն է որ ամենէն շատ արտադրած է, ամբողջ ովկէանս մըն են իր արտագրութիւնները, որոնցմով ոտուար հատորներ կ'որելի է ընդհնել։ Իր առաջին քայլերը ոտած է Փրանսիան գրականութեան մէջ, զրելով Փրանսերէն ոտանաւորներ, ու դեռ երիտասարդ մասնակցած է La Parnasseի գրական մրցումներուն, շատ անգամներ առաջնութիւններ չահելով։ Եթէ Փանոսեան շարունակէր միշտ Փրանսերէն գրող մը ըլլալ, Ֆրանսայի մէջ իր անունը պիտի յիշուէր։ Երկու երեք տարի առաջ sensationnelle յայտնութիւն մը ըրաւ քրքուռմիւր թարգմանութեան առթիւ, շտկելով այն տաղաչափական սխալները, որոնք սպրդած էին Պրզանսոնցի էթիկէն Ֆլաթէի թրթուռներու Ֆրանսերէն թարգմանութեան մէջ։

Ամէն նախակրթարանի աշակերտ կը ճանչնայ Փանոսեանը, այնչափ շատ հանգիւած է այդ անունին իր ընթերցանութեան հաւաքածոյներուն մէջ։

Մօլի յանգիւած մըն է։ Գաւաթ մը ջուր խմածի չափ դիւրութեամբ կը գրէ ոտանաւոր մը, առ այդ ունեցած իր համազուններուն վրայ գաղափար մը կազմելու համար կարժէ կարդալ 1903ի «Ծաղիկին» իր գրութիւնն սկսեալ Յանգալէճը Ռ. Յ. Պերպէրեանի հետ, ուր բողոքական քարոզիչի մը համոզիկեր խօսքերով կը պաշտպանէ ճոխ յանգը։

Թանգնէ՛ ակնարկով
Տերելը ծաղիկին,
Ճոխ արդուգարդով՝
Դեղածիծաղ կիւն։

Առանց յանգի՝ կամ յանգերով կաղ եւ կոյր Տաղեր՝ չ'ունին ամբողջական գեղ, հրապոյր:

Իբր նորութիւն իր մէկ փորձը յաջողութիւն գտաւ, ու բաւական աղմուկ հանեց, Արխողոմ ստորագրութեամբ գրած քրոնիկներն ըսել կ'ուզեմ, որոնք յոյժ դժուարին գործ մըն էին ու Փանոսեանի մը գրչին գործը միայն:

Արձակներ ալ գրած է, որոնց մէջ բնաւ չէ յաջողած սակայն, բացի մէկ հատէն, ուր իր առաջին ոտանաւորին հրատարակմանը պատմութիւնը կ'ընէ: Ասկէ զատ ունի նաեւ սիրուն վիպակներ, որոնք արձակի ձեւով ու նոյնայանգ, տօն օրերու առթիւ գրած է sur commande Սուրհանգակի համար, ինչպէս նաեւ Բիւզանդիոնի երկհազարթուեակին մէջ Զինական Մասալը յոյժ յաջող բանահիւսութիւն մըն է:

Փանոսեան եղած է նաեւ բեղուն տապանագիր մը. Թող ինք խօսի, «Կարծուածէն չա՛տ աւելի ոտանաւորներ ունիմ տապանաքարերու վրայ հրատարակուած»: Գրական յաւակնութիւններով չէ սկսած իր ասպարէզը: Իր առաջին ոտանաւորը հրատարակուած է... տապանաքարի մը վրայ: Ահա՛ անոր առաջին տողը.

Քահանայիս որ ընդ շիրմաւս այս հանգեաւ.

Մեր գրական թերթերուն մէջ ունի իր place reservée. չարաթներ առաջ կը ծանուցին իր աշխատակցութիւնը կամ ոտանաւորը: Չարածճի կատակներ ունեցած է Յ. Արփիարին հետ, ու լուրջ գրավէճեր ալ Մարկարացիին հետ, որուն Փանոսեանի նուիրած Գրական դիմաստուերներուն թշնամական ոգիին հետեւանքով բաւական մը տուին առին իրարու հետ:

Քանի մը տարիներ առաջ ամբողջ հայ մամուլը թշնամացաւ իր դէմ ամբաստանութեան մը հետեւանքով: Աղեքսանդր Փանոսեան բանագորդ: Ասիկա բաւական ջղաջունց յայտնութիւն մը եղաւ իրեն համար, ու շատեր հեղինակութենէ զուրկ գրագող մը նկատեցին զայն: Բանագողութիւն ըրած է թէ ոչ, ասիկա կարեւորութիւն չունի ինձի համար, որովհետեւ իրական արժանիքին հետ կապ մը չունի անիկա: Իմ կարծիքովս ճարտար բանագողութիւնն ալ ունի

իր արժանիքը: Արդէն հազուագիւտ բան մը չէ այդ երեւոյթին հանդիպիլ օտար գրականութեանց մէջ: Վոյթէն առաջնակարգ գրագէտ մը ըլլալով հանդերձ առաջնակարգ բանագող մըն ալ էր: Շէյքսպիրի «Համլէթ»-ը տիեզերահռչակ «Համլէթ»-ը գլուխ գործոց բանագողութիւն մըն է: Եւ Աղեքսանդր Տիւմա հայր իր յաջողութիւնը ճարպիկ բանագող մը ըլլալուն կը պարտի: Երբ գրագողութեան յանցանքով կը դատուէր դատարանին առջեւ, գիտէ՞ք, ի՞նչ ըսած է իբր արդարացում. «Քանի որ անոնք (Շէյքսպիր եւ Վոյթէն) կը գողնան, իմ մեղքս ի՞նչ է որ անոնցմէ աւելի վատահելի չըլլամ»: Այս պարագան տարբեր չկրնար ըլլար, հոգ չէ թէ խնդիրը հայ Աղեքսանդրի մը վրայ դառնայ...:

Փանոսեան լեզուի անօրինակ սահունութիւն մը ունի. Իր ոտանաւորները կը գրէ արձակի նման սահուն եւ կոկիկ լեզուով մը, մանաւանդ Ալիսալանի Փանթէզիները ամենէն շատ օժտուած են այս գնահատելի յատկութիւնով.

Կատն'ը, խուսափուկ դշխոյ իմաստուն,
Որ խորհրդաւոր աչ ես այնքայնի,
Բիրս ու անճաշակ մասները մարդուն՝
Վեհ, զոհարագարդ, քաւիշ գեղանի
Դեմքդ զըզուելու, ո՛չ, չեն արժանի:

Մտանաւոր հակում մը, գաղափարներու եւ տեսականներու caracteristique որոշութիւն չէ ունեցած երբեք: Փանոսեան թեթեւ մուսայ մը միայն ունեցած է, որուն քնարը մերթ երգած է յուսահատ սիրահարի մը լալկան շեշտերով.

Եւ երբ տեսնես մի ծառ անշուք, անտեւ,
Կամ ֆայֆայուն, անթեշ անձայն մի ֆնար,
Կամ նուրբ ծաղիկէմ'որ քարշաւի անտեւ,
Կամ չոր աղբիւր ուր ջուր գտնէ չե՛ հնար,
Եւ երբ տեսնես քափուր վանդակ մ'անքոյուն,
Դիշեր մ'անասդ, այդ մ'անկապուտ ու մըռայն
Եւ կամ բշուռն մ'որ, իր ձեռնալք դողդոջուն
Իր գետեզնակներէ՛նք իսկ փորէ՛ անայայն,
Ո՛հ, երբ տեսնես, անսիրտ աղջիկ, եւ յուզուիս

— Յիշե քերթողն, յիշե գիւ:

Մերթ խորիմաստ փրկիստփայլ մը հայե-
ցողութեամբ, յոռետեսի ու լաւատեսի փո-
փոխական ներշնչումներով: Երբեմն խօլ
զուարթութեամբ ֆանթեզիներ տողած է,
երբեմն ալ բնութեան անյեղի երեւոյթնե-
քը վերլուծած է միսթիքականութեամբ
ակադէմիոն գաղափարականով մը: Եղած է
նաեւ յաջող թարգմանիչ մը, մանաւանդ
նմանողաբար գրած ֆանթեզիները իրենց
սիրունութեան եւ տաղաչափական արուես-
տին նրբութեամբը հիւստած ըլլալու կրկ-
նակ հանգամանքներով հեղինակութեան մը
չափ արժանիք ունին:

Երկու տարի առաջ ծանուցուեցաւ թէ՝
մտադիր է քանի մը հատորի մէջ ամփոփել
բոլոր քերթումները: Գնահատելի գաղա-
փար մը արդարեւ, որուն իրագործումը
ի սրտէ կը մաղթենք:

Տրապիզոն

ԵՐ. Մ. ՃԻՒՀԵՐԵԱՆ

ՄԱՐԳԱՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ 4803

Կ. Պոլիս, Մերձան փողոց, թիւ 57

Օսմանեան Պատմութիւն մինչեւ մեր ու-
րերը Մ. Աշեան Ղրշ. 4

Գոնարմասենիկ, երկսեռ վարժարան-
ներու ուսանողներու ընթերցման արժանի
լաւագոյն դասագիրքը Ղրշ. 5

Զրուցատեղական Ընթերցարան. տարրա-
կան կարգերու. իր տեսակին մէջ բոլորովին
նոր Ղրշ. 3

Մանկավարժական Քերականութիւն. Գ.
մաս. պատկերներու վրայ իր անմասն ոճովը
կը սարկեցնէ Հայերէն Քերականութիւնը
Ղրշ. 4

Հայերէն Լեզու կամ Վարժութիւն Գրա-
քարի, կ'ուսուցանէ զբաբարը հասկնալ ու
թարգմանել, առանց հոլովներու ու բայերը
ի բերան սովորեցնելու: Ղրշ. 4

ԿԱՐՃ Միջոցի մէջ Անգլիերէն կամ Ֆր-
անսերէն սովորի փափաքողներու միակ
գիրքը ՄԱՅՍԹԵՐՍԵԱՖԹ ՍԻՍԹԵՄ. 15
տեսարերու գինը Ղրշ. 30

Առողջաբանական Մարմնամարզութիւն.
45 պատկերով, առանց գործիքի. ամէն
տուն պէտք է ունենայ այս գիրքէն Ղրշ. 5:

ՊԱԿԱԴՐՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԵՍ

Ի ԳԸՆԱԼԸ

Երկուշաբթի Գընալը՝ Ս. Լուսաւո-
րիչ եկեղեցւոյ մէջ կատարուեցաւ հար-
սանեկան հանդէսը՝

Ա.ՁՆ. ՕՐ. ԱՆՆԱ ՇԻՐԻՆԵԱՆԻ

ընդ

Ա.ՁՆ. ՄԱՆՈՒԿ ԷՖԵՆՏԻ ՇԻՐԻՆԵԱՆԻ

Կնքահայրութեամբ Մեծ. Լեւոն
էֆէնաի Շիրինեանի:

Շիրինեան գերդաստանին բոլոր ան-
դամները, ինչպէս նաեւ ազգականներ
և բարեկամներ իրենց ներկայութեամբ
գրաւած էին ամբողջ եկեղեցին, որուն
շահերը վառուած էին այս առթիւ:

Աւագերէց Տ. Դիոնեսիոս Ա. Քհն.
կատարեց ձեռնադրութիւնը և իր մաղ-
թանքներովը օրհնեց նորապսակ ամուր-
եկեղեցական արարողութիւններէն
վերջ ընդունելութիւնը տեղի ունեցաւ
Պէլ Վիւ, որ այս առթիւ շքեղապէս
զարդարուած ու նմանը շատ քիչ ան-
գամ տեսնուած ճաշկաւոր և ճոխ
սեղան մը սարքուած էր, ի պատիւ
հանդիսականաց:

Այս տաք խրախճանութիւնը տեւեց
մինչև երեկոյ, երբ հրաւիրեալք ջերմ
գոհունակութիւններու մէջ մեկնեցան
կղզիէն, իրենց ետին ձգելով նորապը-
սակ ամուր անուշ տպաւորութեան մը
տակ:

Մանուկ էֆ. Շիրինեան Պրուսայի
երկ. վարժարանին տնօրէն, արդէն ա-
նուն մը շինած է այսօր իր ոստանին
մէջ, և որ պատիւ կը բերէ մեր հա-
մայնքին: Իսկ Օր. Աննա Շիրինեան,
իր սեռին օրինակելի և տիպար աղջիկն
է, որ իր այսօրուան գովելի յատկու-
թիւնները կը պարտի Տէր և Տիկին Միհ-
րան էֆ. Շիրինեանի պէս տիպար ծը-
նողքի մը անզուգական կրթութեան:

Հանրագիտակ ջերմապէս կը խնդակցի
այս գեղեցիկ միութեան առթիւ, եւ կը
փութայ իր տաք մաղթանքները ուղղել
Շիրինեան բարեհամբաւ գերդաստանին հաս-
ցէին:

ՔՆՆԱԴԱՏ ՕՐԱԳԻՐ

Տեսնելով թէ վերջին մի քանի շաբթուան մէջ (Օրագիր) գրողներուն թիւը կ'աւելնայ տեղական թերթերուն մէջ, ե՛ս ալ իմ կտրգիս կուգամ այդ հոգը վրաս առնել (իբր թէ ամենեւին տեքտ ըստած բանը չունենայի) եւ կ'սկսիմ, օն ա'նդր:

Է՛յ նայիմ իմ սաստկասիրտիքի բարեկամս եր. Թօլայեան (դո՛ւ որ անձնապէս մեծ երգիծարան մըն ես) նախ քիչ մը քեզ հետ խօսի՛նք:

«Խոստմանանք»իդ մէջ կըսես թէ մեծ մայրիկիդ քուրիկը մինչեւ 80 տարեկան օրիորդ մնաց, եւ քանի որ դու ալ ամենեւին ամուսնանալու դիտաւորութիւն չունիս, մտադրած ես մինչեւ 80 տարեկան օրիորդ մնալ 81իդ տիկին ըլլալու համար գուցէ (նիջ տեքտ մի ըներ) սիրելի Երուանդուհիս, ըլլաս 80, ըլլաս 90, ըլլաս 100 (ուրիշ գաղափարի չերթաս) միշտ պատրաստ եմ քեզ հետ Ս. Խորանին առջեւ 120 բունթօնոց մեծ այտոն արտասանել, զի ես ալ մտադրած եմ ամուրի մնալ առ յաւէ՛տ, բայց մի կարծեր թէ քեզ նման ehazgeant de sexe, ո՛չ, այլ միշտ ա՛յր մնալու պայմանաւ, եթէ ո՛չ, առաջարկութիւնս անկարելի կըլլար:

X

Միմսին Օրագիրը գրելու համար նախ անկաւտանալ պէտք է կըսես (ինչ որ քու սովորութիւնդ է): A titre de mi-médecin տնկուտիութեան Traitement կը գրեմ քեզ հո՛ս, դիմէ ուղղակի «Հանրագիտակի խմբագրութեան», տե՛ս սիրելի բարեկամդ Վահան Փափազեանը, առաջարկէ անոր, թերթին գրական ընկերակցութիւնը, եւ պաշտօնի սկսելով խնդրէ անկէ առ հաշիւ ուզած դրամի-շաբթուան հասոյթէն վճարելու պայմանաւ bien entendu, եւ վայն օրը մէկ անգամ գաւաթ մը ջուրով կոկորդէզ վար կուլ տուր ... իիիբ....

X

Կարգ մը յայտարարութիւններէ վերջ կըսես թէ՛ քեզ համար անկարելի է սիրահարիլ օրիորդի մը, եւ երանի կուտաս Պ. Ալիիարին որ սիրահար մ'է Հոռոմ սպասուհիներու (ասիկայ կը հասկնամ) քիչ մ'ալ վար կ'աւելցրնես թէ՛ օրին մէկը երկու հատ, մէկը մեծ միւսը պզտիկ բեկտօնիքով զրոշմամբ են փափուկ երեսիկ, պատճա՞ն, որովհետեւ, ի տես զոյգ մը Յոյ՛ տատրակներու ըսեր ես «Թի օրէա փու իսէ»:

Ահա հոս է որ չեմ հասկնար, քանի որ չես կարող սիրահարիլ ինչո՞ւ (քո՛ւ չու քո՛ւ չու) կելլաս անոր ասոր խօսք կը նետես, գիտնալով թէ ա՛յս է մէկու մը հետ սիրաբանութեան սկսելու միակ միջոցը, Ե՛կ բեհրիգ Ե՛կ լաճաւալ քուրջուսը: Ես ասկից կը հետեւցընեմ որ թէպէտ շատ փորձած ես սիրել բայց խոնարհել, սակայն կերեւի թէ Պ. Ալիիարին նման բաղդը քեզի չէ ժպտած ամենեւին, որմէ յուսախար, ուրտած ես այլ եւս ոչ սիրահարիլ եւ ոչ ամուսնանալ (չիտակը շատ ցաւալի բան):

X

Եւ դուք Օր. Պ. Շահինեան, թէպէտ զձեզ ճանչնալու պատիւը ունենալէ զուրկ եմ դեռ, սակայն ինչպէս առածը կըսէ «le Syle c'est l'homme mame» կէս մը ճանչցածի պէս կըլլամ զձեզ՝ կարդալով ձեր «Օրագիրը»:

Կը գովեմ ձեր ուղղութիւնը եւ կը մաղթեմ երբէք չը շեղիլ, փասն զի թէպէտ կը ջանամ իբր առաջին անգամ լռելով անցնիլ «անցեալ» օրուան ձեր ունեցած խորհրդածութեան վրայ, սակայն ուրիշ անգամ պիտի չկարենամ սուսիկ մնալու քաջադուրծութիւնը ունենալ:

Իսկ գալով Կիրակի օրուան համար Թ-mi-Saison գլխարկ մը չունենալուդ, որ կարգիլէ ձեզ դուրս ելնելէ, պիտի յանձնարարէի որ «Grand rue, maison Parre»-ի դիմէ իք....

ԱՇՈՏ ԲԻԹԱՊՃԵԱՆ



ՄՐՏԱԿՑԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

Մրտակից ընկերուհիս

Օր. Մաքրուհի,

Նամակդ տուի, զպրոցական ամբողջ հին յուշերը վերսկսան երեւակայութեանս առջեւէն անցնել: Աչքիս առջեւ բերի քեզ, տխրեցայ. քեռէ չի սպասեր որ ատանկ տողեր արտադրես, որոնք ինծի յեղաշրջեցին երեւակայական գէշ ու անյուսալի իրողութեան մը: Ատոնք գիր չեն, գրութիւն չեն, այլ սիրտ խռովող, հոգի փղծկեցնող մտածմունքներ. խոհմանք՝ որոնք եկան գրտան սրտիս մէջ արձագանգ: Տխուր եմ այդ օրինակ զգացումներով բեղմնաւորութեան տեսնելով զքեզ: Սակայն անտեղի չեն անոնք... Բայց ի՞նչ կ'ըսեմ, անտեղի՞ են...: Ատանկ բաներ մի՛ խորհի՛ր սիրելիս: Յաճախ չար ու գէշ նախազգացում մը կը խափանի, կը փարատի բոլոր տպաւորութիւններով ու խորհուրդներով:

Նամակիդ մէջ «տկար եմ ուզ սկսեմ» հիւանդ եմ ուզ վերջացուցի՛ր ես...: Հիւանդութիւններ կան որոնք ոչինչ բաներէ ծնունդ կ'առնեն եւ բժշկական դեղագիրով մը կ'անցնին... կը բուժուին...: Բայց հիւանդի մը նախնական պէտքը, սկզբնական ամենակարեւոր դեղը Յոյսն է, Հաւատքն ու Յոյսը, զոր պէտք է ունենանք միշտ մեր հոգիին մէջ թաքուն:

Մի՛ յուսահատիր ազնիւ ընկերուհիս, համոզուէ՛ որ ես ուլ հիւանդ պառկած էի ասկէ քանի մը օր առաջ, մինչդեռ հիմա, բոլորովին առողջութեան բոյրը կը ծծեմ:

Կը հասկնամ թէ դրամը ըզմանքի կամ դիտաւորութեան մը կատարման նախնական միջոցն է, որուն պէտքը կը պահէ յաճախ, մեր ըզմանքներուն ու փափաքներուն յագուրդ տալու համար, եւ որուն անձկութիւնը կը գրեմք երբեմն: Եւ այդ սկզբնական միջոցը՝ շատ անգամ մեծ դեր կը խաղայ կեանքի պայքարին դէմ. բիւրուար

պակասութիւններ, թերութիւններ կը ծածկուին, կը սքողուին անոր թանձր վարագոյրին ետեւ ահաւոր: Ընտանեկան մեծ ու անդարմանելի աղէտքներ, անյուսալի լրբութիւններ, ամբարշտութիւններ կը պահուրտին, կ'անհետանան անոր շլացուցիչ, ճաշաւոր ճառագայթներուն տակ համասփիւռ: Եւ, այսպէս, միջոցի պակասութիւնը կ'ընկճէ հոգին, գիտեմ...: Սակայն...:

Հօրաքրոջս որդիին՝ Արմենակին խոստացած էի կիրակի օր միասին իջնել գիւղէն եւ այցելութիւն մը տալ քեզ, մօտէն տեսնուելու համար հետդ: Գիտես արդէն, ըսելիքներս կարեւոր են, որոնք այս դանդաղ գրջովս մտքիս մէջ չեմ կրնար ծրարել: Արմենակը շատ ուրախացաւ՝ երբ քեզի գալու գիտաւորութիւնս յայտնեցի իրեն. ան ալ բաւական ժամանակ է քեռէ հեռու մնացած է...: Անգգամ դուն ալ, յատուկ նամակ մը չես ղրկեր տղուն, վըրտացեր է շիտակը: Խօսակցութեան մը պահուն ըսաւ թէ՛ «երեք ամիս է գիւղն ենք, դեռ նամակ մը չգրեց» եւ տխրեցաւ, հասկըցայ թէ հին յուշերը սկսան սիրտը տակն ու վրայ ընել: Աչքերուն մէջ տխրութեան ցուրտ ցոլք մը նշմարեցի թաքուն:

— Արմենակ, վշտացա՛ր, ըսի խնդալով: Չպատասխանեց հարցումիս եւ գետին նայեցաւ, այն ատեն հոսկցայ թէ՛ դեռ բան մը ունի սիրտին մէջ պահած, զոր միայն քեզի կը պարտէր...:

Բայց այս երեւակայական անպատմելի զգացումները նկարագրելը թէ՛ դժուար է եւ թէ անկարելի իմ գրչիս համար: Տիկին տը Սէվինեէ մը կամ Տիւսար մը ըլլալու է, ամէնէն նուրբ հոգեբանական տեսակէտով պարզելու, նկարագրելու համար երեւոյթ մը, զգացում մը, արտայայտութիւն մը, ժպիտ մը կամ տխրութիւն մը, որ աչքի մը մէջ կը տեսնուի եւ դէմքի մը վրայ կը կարգացուի անգիր:

Նամակիդ մէջ կ'ըսես թէ՛ միջոցը չնրեց գալ տեսնել զիս, ցաւեցայ իրաւոր, որովհետեւ մայրս ծանր հիւանդ ըլլալուն, չպիտի կրնամ գիւղէն իջնալ առայժմ: Այս տարուան մեր գիւղագնացութիւնը կատարեալ պատուհաս մը եղաւ մեզի համար:

Թէպէտեւ ես ապաքինած եմ լիովին, սակայն դժբաղդաբար մօրս ձգեցի այն անկողինը՝ ուրտեղ իմ հիւանդութեանս գէշ ժամերը սահեցան:

Քուզենա դեռ չգիտեր թէ կիրակի օրը չպիտի կրնամ իջնալ գիւղէն: Մինակն ալ չկրնար գալ քեզի: Գիտեմ, շատ պիտի ցաւի, երբ այս տխուր լուրը իմացնեմ իրեն:

Հնդ փոյթ ապաքինում կը մազթեմ: Ինծի քիչ մը վշտացած ես անցեալ նամակովդ:

Մայրդ ինչպէս է: Մեր դասընկերը, Մէօհրիւպէէն լուր մը ունիս: Կարծեմ անցեալ տարի երբ չըջանաւարտ ելանք ամէնքս, վարժուհիի վկայականով գաւառ զրկեցին արդեօք խեղճ աղջիկը, Եթէ, այո՛, ընտանեկան խնդիրը ինչ եղաւ:

Հէք մօրս սնարին քովը հսկելուս մինչեւ լըւս, սրտի նեղութիւն կ'ունենամ յաճախ. ընդարձակ գրէ նամակներդ, որպէս զի քեզմով զբաղիմ եւ ժամանակը, որ կը սուրայ երազաթեւ եւ յաճախ ալ դանդաղ, անտանելի ու ձանձրանալի չթուի ինձ:

Ի քաղցր տեսութիւն:

Կարօտովդ
Թ.Ա.Գ.ՈՒՀԻ

ԻՄ ՄԱՇԸ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Երբ քաքոքնիս՝ որ նոր գեկկին,
Հով մը փչի խոշոր զանկէն,
Ու զիս ճամբէ մաղազային,
Ո՛վ Տէ՛ր փրկի այդ արգելքէն՝

Գիտցե՛ք որ դեռ ես չեմ մեռնիր:

Երբ եփմեքձին, զարգալաքձին,
Դուռս ափ առնել քարեհաճին,
Պօռան կանչեն ու հայհոյեն,
Նմանելով ... անգութ Կայեն,

Սակայն պէ՛տ չէ որ ես մեռնիմ:

Երբ չունենամ գրպանս մի կուս,
Ոչ ոք տածի վրաս ալ գութ,
Ու պըճըսիմ ես քաւ քախըր,
Նմանելով կարմիր պախըր,

Դարձեալ պէ՛տ չէ որ ես մեռնիմ:

Երբ դերձակըս վարպէս Լեւոն,
Բռնէ օձիկս ու քսէ՝ օ՛ն
Տուր գոսթիւմին դրամն, ա՛րի,
Որ կարեցի անցած տարի,
Գիտցե՛ք քրնաւ պէ՛տ չէ մեռնիմ:

Երբ վիճակըս ըլլայ անձուկ,
Ու քանքալօնըս ալ ծակ ու ծուկ,
Եւ պըճըսիմ ես միշտ ծածուկ,
Ծովեզերքը բռնելով ձուկ,
Դարձեալ պէ՛տ չէ որ ես մեռնիմ:

Երբ ձմեռուան քալքօ մը նոր,
Չունիմ կոնակս ես ամէն օր,
Այնչափ պաղիմ ու մըսիմ որ,
Տուրե՛ն ըլլայ ֆիքս մոս մօռ,
Գիտցե՛ք դարձեալ պէ՛տ չէ մեռնիմ:

Երբ կիները զիս անարգեն,
Ու ամէնքն ալ պահեն ինձ ֆեն,
Անշուշտ հաս մը գեղովն անճառ,
Պիտի գտնել ես անպատճառ,
Հետեւաբար պէ՛տ չէ մեռնիմ:

Երբ ամէնքը զիս քանքասեն,
Ու արտաքսեն իրենց դասէն,
Սիրուն կանայք ու հարուստ արք,
Ըսեն այս մարդ՝ անպէ՛տ անարգ,
Տակաւիս ես պէ՛տ չէ մեռնիմ:

Սիրոյ համար երբ ցուրտ օդին,
Չունենալով ոտքս քօրին,
Պըճըսիմ ես այն աստիճան,
Որ վերջը ըլլամ ցաւ ասքըճան,
Մի՛ կարծե՛ք որ ես կը մեռնիմ:

Երբ իմ սիրուն նըշանածըս,
Որուն օժիսն է ուզածըս,
Յանկարծ ինձմէ պաղի չուզի,
Ու ես ընեմ տուր մը պուզի,
Չեմ գիտեր թէ արդեօք մեռնիմ:

Ու երբ ըլլամ ծեր ու անոք,
Չը կարեցի վրաս ոչ ոք,
Ու անպաշտպան մեկ կողմ ձրգուած,
Երբ հառաչեմ ընդ միշտ Աստուծո՛ւ
Այ կարծեմ թէ պէ՛տ է մեռնիմ:

ՍԿԷՆԱՐ

Ե. ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ԻՄ ՕՐԱԳԻՐՍ

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ

Կիրակի չեմ գիտեր ինչ զուգադիպութեամբ մը Բաղէ վաճառատան ցուցափեղկին մօտ ճանչնալու պատիւը ունեցայ Նիկին: Ըսկերուհիս զուարթ sty'ով մը ներկայացուց ինծի ըսելով՝

— Ահա ծանօթ Նիկին՝ որ իր նէնի-ներովը անուշ քուն կը բերէ իր ընթերցուհիներէն աւելի՝ ընթերցողներուն վրայ...:

— Օ՛հ, ըսի ինքնիրենս, ես տարբեր կազմուածքով մէկը երեւակայած էի մինչեւ հիմա, մինչդեռ...:

— Այո՛, ըսաւ ընկերուհիս, մինեօնները ամէն ձեւ կ'առնեն, չորհրհիւ իրենց թիւրաշարժ եւ ճկուն կազմուածքին:

— Այո՛, այո՛, ըսի բարեկամուհիս, զարմանալի բան գրականութեան մէջ 1700 ? o ça c'est trop fort ?

ԵՐԵՔԵԱԲԹԻ

Կանացի դժուարին եւ կնճռոտ խնդիր մը լուծուած:

Մենք՝ այսինքն կանայք, իրենց ամուսնութեան պտուղին տեսակը գիտնալու համար մինչեւ հիմա հոգի կ'ուտային պէտք է ըսել, մա՞նչ թէ աղջիկ:

Ահա ոմն ոք Միւսիւ Պէտար կուգայ մեզ՝ կնիկներուս համար էն էական գաղտնիքի բանալին յանձնել, խորհուրդ տալով թէ, յղի կնոջ մը սիրտի փափախումը եթէ 135-անգամը չ'անցնի ծնելիք զաւակը մանչ է, իսկ եթէ 145-ը անցնի աղջիկ է:

Արդ մեծայարգ գիտունը չէ որոշած թէ որչա՞փ ատենուան մէջ սակայն...:

Մենք գիտուն մը չըլլալով՝ հանդերձ կը կարծենք թէ մէկ վայրկեանի մէջ պէտք է ըլլայ այդ փափախման գործը:

Այս առթիւ կարծեմ աւելորդ չէ աւելցնել թէ, կնոջ սրտի փափախումը տղա-բերքի առթիւ փորձուելէ զատ արդեօք չի՞

կրնար ըլլալ որ նոյն իսկ կոյսերու վրայ ալ փորձուի այդ դրութիւնը:

Թէ ինչպէ՛ս:

Օրիորդ մը, աղջիկտեսի հանուած ատեն տղուն հաւնած կամ չի՞ հաւնած ըլլալը գիտնալու համար չի կրնար ըլլալ որ այդ օրիորդին սիրտին բաբախումը համարուի:

Ես գրաւ կը դնեմ որ, երբ օրիորդ մը իր ուղած երիտասարդին դէմը գտնուի սիրտը ոչ թէ 145, այլ 1450 անգամ կը փափախէ, ուրկէ կրնայ հետեւցուիլ թէ, օրիորդը մտադիր է ձեռք տալ երիտասարդին...:

Չեմ գիտեր թէ այս սխալէմը կընդունի՞ մեծ գիտունը՝ Միւսիւ Պէտար:

ՉՈՐԵՔԵԱԲԹԻ

Շատ անգամ կանացի շրջանակներու մէջ խնդիր է թէ՛ օրիորդ մը ինչ թուալէթ պէտք է ընէ երեկոյթի մէջ: Ահա հարց մը որով պէտք է հետաքրքրուին աղջկանց տէր մայրերը: Աստուծոյ շատեր այն սխալ կարծիքը ունին թէ, իրենց հոգեհատորը ծաղկէ կողովի մը պէս զարդարելով մեծ բան ըրած կըլլան, եւ կամ ուրիշ կերպ խօսելով, սիրամարգի պէս գոյն զգոյն պնդելով կը յաջողին աչքի զարնել տալ: Բայց երբ խընդիրը պատշաճութեան եւ կենցաղագիտական տեսակետով քննենք, պիտի տեսնենք թէ այս դրութիւնը բոլորովին սխալ է:

Օրիորդի մը պէտք է ըստ կարելոյն պարզ հագուած ըլլայ երեկոյթներու մէջ, պատշաճ քօսթիւմ մը, վիզը գոց ինչպէս նաեւ թւեւերը, ահա թուալէթը զոր պէտք է կրեն անոնք, եւ բնաւ չի քսուիլ անուշահոտութիւնները որոնք s'e'vose եղած են ալ:

Օրիորդ մը մետաքս ժիւրը, կամ տըմի տէքօլթէ պլուզը չէ որ պիտի վեր առնէ անոր արժանիքը, այլ համեստութիւնը, նիստ ու կացը եւ ծանրաբարոյ վարմունքը:

Մայրերը լաւ կընեն, փոխանակ իրենց աղջիկներուն մարմինը պնդելու, անոնց ա-կանջները զարդարեն, բարոյական այն կարգի խրատներով որոնց գործադրութիւնը առաջին ազդական է յաջողութեան, այսինքն ամուսնութեան:

ՀԻՆԳԵԱԲԹԻ

Դիտուած է որ մեր հակառակ սեռը, այսինքն այրերը աւելի մսկոտ կ'ըլլան քան մսոտ: Շատ ոչինչ բացառութեամբ մը կիներն են որոնք յաճախ միս կը կապեն ինչպէս կըսեն ժողովրդական բարբառով, եւ ինչո՞ւ:

Այս դիտողութեան շատ մը պատճառներէն էն կարեւորը ըստ իս, հայու կնկան դանդաղութիւնն է, նստուկութիւնը եւ անաշխուժութիւնը:

Մեր մէջ կանայք սա սխալ ըմբռնումը ունին թէ, հայու նիկո ըսուած արարածը, հանգիստ ընելու, ուտելու, խմելու, պառկելու համար ստեղծուած է, եւ ահա՛ այս արմատացած գաղափարին համար է որ մեր կիները ընդհանրապէս թօնօններ կը դառնան, առանց օրը մէկ անգամ իսկ սենեկին շուրջը դառնալու...:

Հանգստութիւնը բնական է որ միս կը կապէ, եւ ահա ինչու հայու կնիկը չի մտնում մինչ անդին ամուսինը կը փառնայ:

Անշուշտ տեսած էք օտարազգի տանտիկիներ, որոնք ձմրան էն սասակաշունչ օդերուն իսկ իրենց գնումները նոյն իսկ իրենք կընեն փողոցներու երկայնքը, խանութէ խանութ այցելելով, մինչդեռ հայու կնիկները...:

Մի ստիպէք որ առաջ երթամ, sa seral encore trop ?

ՈՒՐԲԱԹ

Եթէ սա սիրելի Հանրագիտակը չըլլար, ի՞նչ պիտի ըլլար վիճակս, ես որ բնաւ չեմ հանդուրժէր անտեղութիւններու, որոնք աչքիս կը զարնեն ուր որ ալ ըլլամ:

Նա՛, այս անգամ ալ խօսքս մեր կարգ մը թեթեւ օրիորդներուն է, որոնք եկեղեցւոյ մէջ, ըլլայ վերնատունը, ըլլայ գաւիթը, անպատկառօրէն կը տեսակցին այնպէս, ինչպէս պիտի տեսակցէին երկու վաղապօններ, նոյն լրբութեամբ եւ նոյն թօնով:

Անցեալ օր բարեկամուհի մը դիտել կուտար այս տգեղ պարագան, եւ կը ցաւեր այս ունակութեան վրայ: Իրաւունք ալ ունեւր:

Չեմ գիտեր թէ ի՞նչ կրթութեան պէտք

է վերագրել այս տխուր սովորութիւնը, բարձրագոյն խօսակցութենէ զատ, նամակներու ընթերցանութիւն, խնդուք եւ լծիւ լծիւ, մինչ անդին խեղճ մայրեր ծուկը դրած արցունքոտ աչքով կ'աղօթեն վասն ամուսնութեան իրենց տատրակաց, առանց խորհելու թէ, դեռ իրենց աղօթքը տեղը չի հասած, ասդին աղջիկներու լկտի խնդուքին արձագանքը, թեկնածու երիտասարդներու ակօնջը՝ կը հասնին, եւ արդիւնքը սա կրկնայ որ, անոնց գլուխը փոխանակ թէլով պսակուելու, ճերմակ մաշկը կուգան կը զարդարեն իրենց լիցուն տարիներու շարքին մէջ:

ԵԱՐԱԹ


Կուզէ՞ք հանգիստ եւ անբասկը կեանք մը վարել, ո՞վ իմ հասուկ քոյրերս, բարեկամուհի մի ստեղծէք դուք ձեզի, անջատ ապրեցէ՞ք եւ ձեր գաղափարներով գործեցէ՞ք: Բարեկամուհիները կը նմանին այն անուշ գինիներուն, որոնց խմուածքը թէեւ քաղձօր, սակայն վերջէն գլուխ կը դառնան, կը գինովցնեն:

Աւելի լաւ է չը գիտնալ, քան ուրիշ մը խրատուիլ:

ԿԻՐԱԿԻ

Այսօր իրր զրօսանք, նորածնածնութեան օր. Նիւնիին, խափունի կուտէ քառքօջ մը շինելով պիտի զբաղիմ իրր քաջաւերական իր այնքան անուշ նէնիներուն:

ՊԵՏԱԴՐԻՍ ԾԱՀԻՆԵԱՆ



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՁԵԿՈՅՑ

«Հանրագիտակ» այսուհետեւ կը սպորի՝

Կ. ՊՈԼԻՍ ՊԱՊԸ ԱԼԻ ՃԱՏՏԵՍԻ

Յ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ ԹԻՒ 52

Այս առթիւ կը խնդրենք մեր թըղթակիցներէն և բաժանորդներէն որպէս զի հաճին իրենց նամակները ուղարկել վերոյիշեալ հասցէին:

ԱՂՋԻԿԸ ՄՕՐԸ ԳՈՐԾԻՔԸ

(Շար. նախորդ թիւին)

Կարելի՞ է երեւակայել մայր մը որ իր աղջիկը գործիք ընէ գիւղադարձի դրամ գտնալու համար:

Հաւատացի՞ք կարդալով հետեւեալ իրական պատմութիւնը, որ իր տեսակին մէջ առաջինն է կրնամ ըսել:

X

Մեր ընթերցողները կը յիշեն անշուշտ այն տաք օգոյնին, որ անցաւ Խորիկ աղայի եւ իր տիկինը Մենտուֆի միջեւ գիւղադարձի դրամ ձարելու առթիւ: Եւ որ խեղացի Մենտուֆի՝ յանձն առաւ սեղանաւոր Փիլիկ աղայի դիմելով ձեռք ձգել պէտք եղած գումարը, բան մը որ իր ամուսնոյն գործը չէր:

Երկուշաբթի առաւօտուն Շիրքէթի 37 թիւ շոգենաւը երջանիկ էր իր մէջ կրելով այն չքնաղագիւտ ափիկներ, որ իր աղջիկը բէշն ի վար ձգած, ճարպիկ դարձուածքով մը դրամ շորթելու կերթար, վստահ ըլլալով որ իր մէկ խօսքը երկուք չպիտի ըլլար սեղանաւորին առջեւ, քանի որ... Արաքսին հետն էր...

Շոգենաւը կարգ մը նաւամատոյցները համբուրելէ (•) վերջ հառաւ կամուրջ, ու մեր տիպար զոյգը բէշերնին ժողված դուրս ելան, եւ սկսան արագ արագ յառաջանալ Պոլսոյ կողմը, ուր հաստատուած էր Փիլիկ աղան:

— Արաքսի, նայէ ըսեմ անանկ տըլլայի պէս մի նստիր, ես հօրը հետ կ'օրիւշմիւշ եղած վախտըս դուն հապըռէ աղուն աշկին մէջը նայէ...

— Աման տուտուս, ինչե՞ր կըսես...

— Ըսելիքս աս է քի ինչ պէճերենք նէ ան է, աս օրուան վարձիս բարան եանի վրայ երթալու ըլլայ նէ կա՞յ եա՞... մազերդ պիւնկս կը փաթթեմ տէ անանկ կը դրոշմեմ հա՞... ես ան հար օրաճախիդ

պիտի հասկցունեմ՝ քի իրեն պէս պամպակ չէ Մենտուֆը տէյի... հասկցա՞ր...

— Տուտուս, հիմա կ'ընէ ծունկերս կը դողան կոր...

— Ան առտուն կանուխ ծովը պոնեց ան է, սա դործերնիս աջողցունենք նէ, քեզի խուռու պողաչոյ մը կ'առնեմ գաֆուաթ պատըրմիշ կընես...

— Աղեկ եայ տուտուս, դուն փարայ պիտի կունսս նէ ինծի՞ ինչու համար հետդ կը տանիս կոր, «կառքինիս Լօքչէն ծոեր է տէ, եան կոխելն նասըրըս կը դարնէ կոր...

— Ատ ալ քու գիտնալու բանդդ չէ, մար խըսմին ամէնական պանը կը մոմտայ... հիմա նազ կընես կոր ամա՞, նայիմ քի ետքէն հազ չընես... հիմա, ան ձգէ՞ եա՞ հետդ եէտէկ բուտուս առե՞ր ես...

— Առի ամա վախնամ ձէպս ի վար թուսիեցաւ...

— Թափթիւմ չուն... տիխաթ ընել չիգայ քի... նա սանկ խանութին քէօչն դառցիր տէ բէշդ վեր առ, նայէ քի իրա՞ն է...

— Քա տուտու՞ս...

— Ավաղս ելածին խտար կը պոռամ հիմա... ինչ կըսեմ կոր նէ ան ըրէ...

Ու խեղճ աղջիկը ամսթի կարմիրը երեսին, խանութի մը տնկիւնը կը քաշուի եւ ակամայ կը զննէ գրպանը, համոզուելու համար թէ, բուտուսին կծիկը հո՞ն է...

Վերջապէս մայր եւ աղջիկ երբ բուտուկան կը յառաջանան, եւ հակառակ շուքուց սեղանաւոր Փիլիկ աղայի խանութին առեւորդ առած ըլլալուն, խեղացին Մենտուֆ աւելորդ չի սեպեր անգամ մը հարցնել խուսութպանի մը:

— Աֆ կընես եավրում... բարի լուս, թէ՞ ֆէճի Փիլիկ աղային խանութը ո՞ւր է, սա գիտե՞ս, Սարըեար եազըխ կացողներուն տէճնիւշ փարասին ֆայիզով կուտայ եղեր

նէ, կըսէ Մենտոֆ ճակտին քրտինքները սրբելով ...

— Սըտեղը, սառաֆ մը կա՞յ ամա ... անունը փրկի՞ց է, Սարըհարցիներուն փափայ կուտայ չիտար, ֆայիզ կառնէ չառներ խապար չեմ ... կուգէք նէ մէյ մը կացէք հարցուցէք ...

— Հա ճանըմ ես աղեկը գիտեմ, հիմաճուկ սո՛ւտ պիտի զուրցեմ քեզի ետմբում, ըռարութեամբ սառֆութին կընէ եղեր ... հաթտա՛ ... սղայ մըն ալ ունի ...

Տղայ մըն ալ խօսքը լսելուն, խանութպանը անմիջապէս օրիորդին կը նայի քմծիծաղով մը, ու կը կռահէ գործէ ...

— Ի՛նչ է նէ մարիկս, իշտէ սառաֆին խանութը մենէ հինգ վեց խանութ վերն է, քէօչէյին պերանը գացէք հարցուցէք մէյ մը ...

— Էյ ապրիս ետմբուն, Աստուած պտնըդ գործդ աղողէ ըսելով մայր ու աղջիկ կ'ուզողուն դէպի հոն ուր ցոյց կուտայ տաղան ...

— Ինծի նայէ Արաքսի ... հայտէ սա թուռչունի խանութը մտնանք տէ երեսիդ բուտուան թազէլէմիլ ըրէ, զէրէ հովը բիւթիւն առեր տարեր է ...

— Քա մայրիկ, ոէզիլութի՛ն է ... չօգ չէ՛յ ...

— Հիմաճուկ չէմէյնէյիս կոթը կլխուդ վրայ կը նորոգեմ հա՛ ... իմ սիրտս զաթը չառընթը առաւ, դուն ալ իջուածք պիտի ինջեցունես թէփէյիս ...

Ու խեղճ աղջիկը համակերպելու համար մօտակայ թուռչունի խանութը կը մտնան, ու հոն՝

— Քուզում ուստա թուռչունը, պիզ եպանճը տէյիլիզ, Խորիկ աղա պունտան տայիմա թուռչուն ալըր ... չու պէնիմ զըզըմ տըր, պէչ տաքիգա տուրսուն սա եիւզիւնէ բուտուա սիւրէճէք ...

— Իլահանայ պէչ զրուչ, բաթլիճան, ալթը զրուչ, տուտու հանկըսընը պէյէնիթսէն օնտան տառթըյըմ ... կըսէ մարդուկը իր ապրանքը քշել ջանալով ...

— Քա եօ՛գ, թուռչունը աղասը, Արաքսիմ եիւզիւնիւ պէյաղլաթտըրաճագ ...

— Էյ քօքօնա, պուրասը պօյաճը տիւքեանը տէյիլ քիմ ...

— Նա՛, պիզիմ կծիկիմիզ վար, քուքա Արաքսի ...

— Էյ տուտուս սյնա չիկայ նէ՛ ...

— Նա՛ ... սկրսճմ չուն, ըցունկէկ խալանօզի մը մէջը նայէ կերեւայ ...

— Տուտու նէ տիր պու, ու կսկսի խընդալ մարդուկը, երբ կը տեսնէ թէ օրիորդը երեսը ալիւրի պէս բան մը կը քսուի ...

— Ճանըմ ինչալլահ օղլան հաւնի՛ նէ, տիւլին իջին թուռչոյը պուրատան ալըրը ...

— Ալլահ չօգ չէթտիրմէսին քօքօնայ ... տէ պապալըմ, ըսելով մարդը արմանքէ զարմանքներու մէջ կը մնայ, մինչ Օր. Արաքսի գործը լըմընցնելով երկուքը մէկ դուրս կելլան ...

— Սանկ մէյ մը նայէ նայի՛մ ... հա՛ կերցուցերես ամա՛, քիթիդ քովերուն պօշ տեղերը լաի լաի դրած է ...

— Լալս կուգայ կոր տուտու, էճէլս պիտի մտնա ...

— Չաթը կուտու ըսած պանը չունի՛ք քի ... սա տարիքս եմ ամա, էրիկմարդու մը դէմը ելլալու օր ըլլամ նէ ինտոր չէք տիւզէն տալըս չեմ գիտնար ...

— Ամա տուտուս ա՛ստարն ալ չըլլար, թուռչունի խանութը բուտուա թալէցուսնելը եանի կազէթան անցունելիք քան է ...

— Ան կազէթանի ո՞վ է նէ թող ինքզինքը խազէթան անցունէ ... քալէ իշտէ խանութին մօտեցանք, դուն չիտակ էտելէս ներս մտիւր կուստուլու էտա մը ըրէ նստէ, ինտոր քի ըսի նէ անանկ նայէ քի տղուն աչկին ֆիրթիկը տառցունես ...

Նոյն ատեն սեղանաւորին խանութին մօտեցած ըլլալուն տիկին Մենտոֆ նախ խնդում երես մը չինելով ներս կը մտնէ, որուն կը հետեւի նաեւ Արաքսին։

Խօսակցութիւնը սկսելէ առաջ անցուկ կերպով նկարագրենք Ակնցի Փրիկ աղայի խանութը։

Երկու կանգուն քառակուսի կրպակ մը, ցածուկ ցեղունով, գետինը տախտակ, երեք աթոռ, որոնցմէ միոյն վրայ նստած է 25էն 30 տարեկան երիտասարդ մը, աղտոտ ...

ձիքով եւ վեր թռած փողկապով: Անկիւնը ասակէղարանին մօտիկը նստած է բուն գործին տէրը Փիլիկ աղան, ժանգոտած ակնոց մը քիթին մէջտեղը, 50-60 տարու- բեր մաթուֆ մը, որ նոյն ատեն ձեռքի փոքրիկ նժարով մը 5-10 քովիցներ կը կըշ- ոէր:

Մայր եւ աղջկան անակնկալ այցելութե- նէն չմորած, Փիլիկ աղա, ակնոցին վրայէն խոշոր խոշոր աչքերը բանալով կսկսի պիչ պիչ նայիլ իր նազնեմ հիւրերուն երեսն ի վեր, մինչ կէս քաղաքակրթեալ տղան միւսիւ Տարսաւիչ, ոտքի ելլալով տեղ կու- տայ նորեկներուն, որոնք կանցնին կը նըս- տին:

— Բարի լուս գայ վրադ փիլիկ աղա, աչկդ կը պաղկւր կոր ...

— Եւ Աստուծոյ բարին, հիւրիւմմե- ցէք ... բարի եկիք ...

— Բարի տեսնեք ... պէլքի չի ճանչ- ցար պիրտէն պիրտ ...

— Բարով կու զուրուցես, հրամաննոցդ ի՞նչ կը զուրուցես ...

— Մեզայ, վար տա կէլ խորիկ աղային կնիկը չե՞մ ... ուր է Սարընար աս տարի Չըրչըրը օր մը դէմ դիմաց մէյմէկ ծառի տիպ ըռասթ եկանք ...

— Մառայականիդ իշողութեանը չի գար ըմմա՞ ... հրամանքդ սուտ չի տի գրուցի՞ս եա՞ ...

— Հիմաճուկ Փիլիկ աղաս քեզի իրիճա մը ունիմ ...

— Հիւրիւմմեցէք, անկճիս բիւրթիկը ձեզի տի կալեմ ...

— Մենք աս տարի ուզեցինք քի եազ- երթանք տէյի, ուզեցինք քի կսե՞մ նէ՞ խորիկ աղան հիչ չուզեց, ես իլէն աս մենծ աղջիկա ... մենծ կըսեմ նէ տահա աս տա- րի երկան Ֆիստան հազցուցի, սանքի ըսեւ կուզեմ քի 14ին 15ին մէջն է ...

— Խորոտ ... կըսէ Փիլիկ աղան, եր- կար չունչ մը առնելով:

— Իշտէ եղանք գացինք նէ իսէ, էյ օլ- աուխճա ճիւմպիւշնիս տեղը կնաց ամա՞ ... ետքէն քիթերնուս պերներնուս եկաւ ...

— Մառայականըս մասլահաթիս մուճի- պոքը երկար բարակ չի տի կրնամ ընկըճիս

բիւրթիկը տըզլաթմիշ անէր. ինչ օր տիլէկ տի անես թէյ չլտէն իճուպը իճրան արէ՞ ո՛ւր, ֆայիզը միւթէրաքիւմէն հիսապ ըլի ու սէնէթը եիւրիւթմիւշ անենք ...

— Սման Փիլիկ աղա, աչկդ խաղա, ինչէ՞ն հասկցար քի փարայի համար եկի- եմ տէյի ...

— Հապա ի՞նչ տըլի, սարֆի խանիւթը չըրխա ֆուստօն չի տի ծախի՞նք ա՞ ...

— Իշտէ հիմա ատ վէֆք ու սէֆաներ- նուս ետքը վար՝ տեղերնիս պիտի դառնանք ամա, իշտէ ամա՞ ...

— Զիհնիմէ տանք տէտի՞ ... ըսեւ կու- զէ՞ք ո՛ւր, ֆայիզը միւթէրաքիւմէ վէ սէ- նէթը մուսաուտագով փարայի պէտքութի- նուիք ...

— Իշտէ անոր պէս բան մը ...

— Ի՞նչ ըրգակ ըէհին տի տաք ...

— Մեղայ Աստուած ... զահէր եա- պանճի ենք քի ըռէհին տանք, իշտէ ա- գործին մէջը դուրսէն մարդ չի խօթեցի քի- առանկ ուռումիզտէն պաներ չըլլայ տէյի... ըռէհի՞նը իմին մէկ խօսքս ...

— Աֆըդ խթիրհամ կանեմ, ատ գոր- ծին մուճիպը էնճամը չի տի կալեմ ...

— Վո՛ւյ Փիլիկ աղա, ատ ինչ ըսիր ... էճէ՛լս պիտի մանաս ... մէյ մը սա ճիւման աղջկանս նայէ տէ անկէ ետքը ճուղապ տուր, նայէ երեսները ալ վալա եղաւ, ել- այ սիրտին դընէ նէ ետքէն ի՞նչ ընեմ ...

Այս միջոցին միւսիւ Տարսաւիչ, որ ճիշդ Արաքսիի դէմը նստած շողիկ կը վազցներ օրիորդին մալակոնուած դէմքին ի տես, խօսք առնելով,

— Հա՛յր, եթէ կարելի է կատարենք այս տիկնոջ խնդրանքը ...

— Մօ՛ւ անիծիծ արմատ, դիւ ի՞նչ ճի- վերս կու խառնշտըկես, քէօթէկ կու կալ- լէ՞ս հրամանքըդ ...

— Էյ չէ Փիլիկ աղա, աֆ կընես ամա, ախորդդ տարիքը տղուն ալ ատանկ ճահիլ աղջկան քով չախելդ բէք չիրքին բան է... չէ՛ ... ասիկայ չեղաւ, քէչկէ իմ դէմ- չըլլար աս պանը ...

— Էյ էնճամը քէլամ մի արէ տը ըմըն- նայ, մենք ֆէօս գործ տի տեսնանք ...

— Իշտէ ասկէ աղեկ գո՞րծ ... հիմա-

ճուղի ինծի հինգ օսկի պիտի տաս, վախճանը սահաթը կայ նէ տիւմանովը պիտի պերեմ թէսլիմ ընեմ . . .

— Ծառայականըդ խօսք չի կալէր փարայ կու կալէ . . .

— Մեղայ Աստուած, դուն փարայ կը կըլես նէ ամէն մարդ քեզի պէս կըլայ Փիլիկ աղա, ես անեղիքիս ինտոր որ քի սաղ եմ նէ, անանկ ալ ապրիքիս սափա սաղլամ եմ, հէլէ դուն տո՛ւր սա փարան . . .

— Չի տի կրնամ տալ . . .

— Ուրք պաղնեմ Փիլիկ աղա վրաս կէշութիւն կուգայ կոր . . .

— Չի տի տամ . . .

Այս միջոցին միւսիւ Տարսաւիչ խօսք առնելով,

— Հարիկ տանք, ես կ'երաշխաւորեմ . . . ես տիկինը կը ճանչնամ . . .

— Սալթ ինծի՞ կը ճանչնաս ես վրուս, հապա Սրաքսի . . . Չըրչըրը քիչ մը քիչ ճէվիդ իչի կերած տէ ալըմանիս երեսը նալած ես . . . եանի նանքէօուլթին կըլայ Էկէր ինքեար կաս նէ . . .

— Այո, տիկին կը յիշեմ օր մը ձեզի հանդիպիլս . . .

— Տեսար Փիլիկ աղա, տղադ քէֆիլ կըլայ կոր . . .

— Ծօ՛ շանն օսկոր, թէքլիֆն ու թէքլիւֆը մէկ կողմ ձգի ու տիւրիւսդ լախուտու արէ ուր պէյնըս չի ճաթեցունէք . . . հըմայէկս ուր ես աս հինգ օսկին տուի իսէ սըղրա ո՞վ տի տայ աս թէմէթթիւն . . .

— Նա ինծի չես հաւտա՞ր նէ, էրիկս օռթան է, պէլի պաշը մարդ, պըյըխներուն մէջը ճերմակ ինկաւ, տահա մեղայ է Տէր Աստուած քի լէքէ մը վրան ինկած ունի նէ . . . նա՛ խորիկ աղան չարչին է . . .

— Աֆ կանես ըմիս աս գործը չի տի կրնամ կալեր . . .

— Բսխեմ թէփէթ, կուգես կըլէ կուգես մի կըլեր, ես իսէ պապա մարդ մը կիտցայ տէ չիտակ քովդ եկայ . . .

— Հազարէթն ի՞նչ տըլի . . . ճանապէր կնիյ մի կերեւաս դիւն, անկճիդ բիւրթիւկը ծակ ըլլալուն միւսիւսը, ծառայականըս . . .

— Տէ էրկան լախըտը չուգեր, քալէ

քա Սրաքսի, ամէն պահին խերովը . . . չի տար կոր նէ թող չիտայ, աս ալ տէ՛րս պիտի ընեմ, Աստուած մէկ դուռը կը կոցէ նէ մէկալը կը պանայ . . .

Եւ այսպէս մայր ու աղջիկ երբ կը պատրաստուին դուրս ելլալ, միւսիւ Տարսաւիչ իրենց կը հետեւի եւ փողոցը դառնալուն,

— Ներեցէք տիկին. ես այս իրինկուն ձեր ուզած դրամը կը բերեմ, դուք անհոգ եղիք, ես անպատճառ այս գիշեր ուշ ատեն կ'անցնիմ ձեր տունն . . .

— Վո՛ւյ ապրիս ես վրուս, ապրիս ամա մեր տունն ասնիս նէ նասը՛ կըլայ, իլէքի մեր տունը կալու ես . . .

— Ո՛չ . . . կ'անցնիմ ըսելով կը հանդիպիմ ըսել կուգեմ, հիմա դուք չիտակ տուն գացէք հանգիստ . . .

— Շնորհակալ եմ ես վրուս, Աստուած մէկ օրըդ հազար ընէ, ծառքը ատիօ ըրէ Սրաքսի, ըսելով մուշտա մը կուտայ աղջկանը, որ կը համակերպի . . .

— Մեռսի . . . ես իրինկուն կուգամ . . .

— Բէք աղէկ, ես ալ հոն չըլլա՞մ նէ Արաքսին դուռը թող պէքէյէ, անոր հետ տեսնուեցէք, ան ետքէն ինծի թող կանչէ . . .

— Լա՛ւ, Լա՛ւ . . . ըսելով Տարսաւիչ կը մեկնի իր բլանը լարելու, որ է հորմէն գողնալ հինգ օսկի եւ յանձնել Արաքսիին մայրիկին . . .

×

Երեկոյին ուշ ատեն, բարակ անձրեւ մը կը մաղուէր Սարքեարի բարձունքը, Ժամը մէկին մօտ, մութին մէջ ատուեր մը կը սլքտկար խորիկ աղայի սան դրան բոցը տիքը: Գիշ մը վերջ դուռը բացուելով չալը գլխուն Արաքսի կերեւայ սեմին վրայ ու կսկսի վար վեր ակնարկներ ձգել, Ստուերը կը մօտենայ եւ հովանոցին տակ պատսպար կուգայ կանգ առնել օրիորդին մօտ:

— Բարի իրինկուն օրիորդ . . .

— Ասծու բարին միւսիւ . . .

— Շատ շնորհակալ եմ որ հրաւերս ընդունելով ճիշդ ատենին կապաւէք հոս . . .

— Էյ անանկ չըսիր մի ես . . . տուտու ըսաւ քի պէքէյէ տէյի . . .

— Ա՛հ . . . չքնաղագիւտ ստատակ:

գիտէք որչափ կը փափաքէի տուանծին գըտ-
նուիլ ձեզի հետ . . .

— Փարաները բերի՞ր . . .

— Դրամէն առաջ սիրտս բերի օրիորդ,
յուսարով որ մամոնայէն ալ աւելի յարգի
պիտի ըլլայ ձեր մօտ . . .

— Երթամ մայրս կանչեմ աէ անոր
տուր . . .

— Խնդրեմ օրիորդ, երկու խօսք, եր-
կու բառ բաւական պիտի ըլլայ զիս համո-
զելու թէ . . .

— Ո՛ւֆ . . . կը մտիմ կոր . . . երթամ
տուտուս կանչեմ . . .

— Խնայեցէք օրիորդ . . .

Նոյն ատեն հովանոցը բացած մայրա-
ստուեր մը կուգայ կը տնկուի դրան առջեւ
ու կսկսի պիշ պիշ նայիլ երիտասարդին,
Արաքսի անմիջապէս կծիկը կը ղնէ . . .

— Տունը հիւանդ կայ, ի՞նչ կայ օլլում,
հրամանքդ է զաճիկի չըրա՞յս ես . . .

— Ո՛չ . . . արդէ՛ն . . . այո՛ . . . ես
. . . տիկին . . . ին . . .

Ո՛վ ես ծօ՛, հիմա թէքմէիս տակը կառ-
նեմ քեզի, չափուիս ըսէ ի՞նչ կը խորթէիր
կոր աղջկանըս հետ . . .

— Ներեցէք, ես սեղանաւոր Փիլիկ ա-
ղային աղան եմ . . . տիկինը դրամ ուզեց
ես ալ բերի . . .

Այս խօսակցութեան միջոցին տիկին
Մենուիք վրայ կը հասնի,

— Ի՞նչ է ան, ի՞նչ կը չափես կոր տը-
ղան, իչսէ կէօջիւ փարայ է բերեր . . .

— Բա նասը՛լ փարայ, ասըլ համալ տէյի
եկեր է քի Խորիկին եիւքտէ հաֆիֆ բա-
հատա աղըր մալերը սըռըխլամիլ ընէ տէյի . . .

— Տէր ողորմեայ ըսէ . . .

— Խառնախտիին քէօքը, կէօլ կէօրէ
Արաքսին կը շալկէր կոր վրայ չի հասնէի
նէ . . .

— Գիտեմ ես գործը, դուն ծանրդ կըտ-
րէ պամպակ հէրիֆ, պէրէքեաթ Արաքսին
քի աս տարի սուռաթնուս ըռէնկովը վար
պիտի իջնանք . . .

— Ես քեզի բան մը ըսեմ, գալ տարի
նէ վեր ելլանք նէ վար իջնանք կընիկ:

×

Մայրե՛ր, մայրեր, խնայեցէք ձեր աղ-
ջիկները, գործիքներ մընէք զանոնք ձեր
խել խօլ քարոհներուն: Եթէ եթէ չի կըր-
նաք ամուսնացնել զանոնք, պատճառը ե-
րիտասարդներու մօտ մի փնտռէք, այլ՝ նոյն
խսկ ձեր քովը, ձեր խղճին մօտ:

ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

ՎԵՐԼՈՒԾՈՒՄ

Ուխտած եի որ ո՛չ մեկը սիրեմ,
Զի մարդոց սերերն նեղոց եմ յաճախ՝
Այլ պաշտեմ միայն Խորհուրդը վսեմ,
Բնութեան անհուն ծոցին մեջ՝ խաղաղ:

Բայց դո՛ւն, այդ ուխտը ինձ դժեղ տուիր,
Թովեցիր հոգիս, վեա տղու մը պէս՝
Գրգռելով անշուք, սերը՝ անյարիր,
Սերը՝ որ վճռեց քաղիս վերջապէս:

Հիմայ կ'զգամ քե ի՞նչ կ'արժե սիրելն,
Աղփաթին համար սերը՝ ատապանք,
Սերը՝ մարդերու միացման սուրբ թելն,
Մեղաւորին ալ, փառութեան՝ փրկանք:

Բայց չ'եմ կրնար ես չը սիրել քեզի,
Զի վեհերու սիրտն՝ լոկ սիրով կ'ապրի:

ՍՏԵՓԱՆ ԽԱՉՈՒՆԻ

ՅԱԶՈՐԴ ԹԻՒՈՎ

ԱՐՈՒԵՍՏԱՍԷՐԻ ՄԸ ՅՈՒՇԵՐԸ

ԱՇՈՏ ՄԱՏԱԹԵԱՆՅԷ

Եւ իւր լուսանկարը .

Նոյնպէս ,

Գիտութեան ծառը

ՏԻԿ. ԲԵՐՈՒԶ ԶԱՏԻԿԵԱՆ

ԹՕԼԱՅԵԱՆ

ՇԱԹՐԵԱՆ

Եւ Սայօնի հաւկիթներ

ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆԷ

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Լանկայէն մեզ կը տեղեկացնեն թէ՝ թաղը ամբողջ ֆափե ֆոնսեռ մը դար-
ցած է, չնորհիւ դաշնակահար օրի-
որդներու, որոնք իրենց անվարժ
մատներով գլխու ցաւ կը պատճառեն
լսողաց։ (Կերեւայ թէ մանտօլինի նո-
րոյթը դեռ ոտք դրած չէ հող. Ծ. Խ.)։

— Եէտի-Գուլէէն մեզ լուր կու-
տան թէ՝ տեղացիի մը յանկարծական
ակռայի ցաւէն խեղճը հայերին դէմ
աշտանակ ի ձեռին դեզ դնելու հե-
տեւանօք փառաւորապէս պետերը այ-
րեր է, ինչպէս նաեւ այս արտառոց
ֆառիֆաթիւնը տեսնող տիկնոջը սիրար։
(Բանի որ լուրը Եէտի-Գուլէէն կու-
գայ . . . Աստուած բժշկութիւն տայ,
Ծ. Խ.)։

— Անցեալ կիրակի Սկիւտարէն Պո-
լիս իր նշանածին այցելութեան գացող
միւսիւ մը համակ մարկոթք մեծկակ
ծաղկեփունջ մը քամառան մոռցած
ըլլալով սարսախութեան առաջին մըր-
ցանակը ստացաւ։

— Նոյն գիւղէն իճատիէ ըսուած
թաղը՝ նորաբաց ֆափե Աշոտը յաճախող
թաւլուճի միւսիւներէն կը խնդրուի
բանթուֆներով չը գիմել հոն՝ յարգե-
լով բըրթի Սըլանսիսի անունը։

— Գատը-գիւղէն մեզ կը գրեն
թէ՝ տեղացւոց է՛ն պատուաբեր մե-
ծարանքը եղող թէյի սամավարները
արինայով շփուելու վրայ են։

— Կիրակի Մօտայի զբօսավայրը,
գերեզմանէն փախածի պէս ճեբ ճեբ-
մակ քօթիւմով պտըտող օրիորդ մը,
կիմանանք թէ 38 1/2 աստիճան տա-
քութեան մէջ է։ (Աստուած բժշկ-

ներու քէսէին պէրէքէթ տայ. Ծ. Խ.)։

— Գում-գաբուէն մեզ կը տեղե-
կացնեն թէ՝ դպրաց դասու տնօրէն
խորհրդոյ անդամներէն մին, սնտուկին
հասոյթը աւելցնելու մտօք բռնի նուի-
րահաւաքումի սկսած է իր դասակից-
ներէն։ (Կը յիշեցնենք անգամ մ'ընդ-
միշտ թէ՝ այդ բարի օրինակը նախ
պէտք է ինք տայ, ի քաջալերութիւն
եկեղեցական այդ գործին. Ծ. Խ.)։

— Ատաբաղարէն մեզ կը գրեն թէ՝
Ս. Հրեշտակապետ թաղի վարժանին
տնօրէնը հրաժարելէն ի վեր տղաքը
փողոցներու մէջ չեղիֆ չօմաֆ խաղալու
վրայ են։ (Այս լուրին անմիջական
հերքումը կսպասենք մեր թղթակցին)։

— Իզմիտի մեր մասնաւոր թղթակ-
ցէն կը տեղեկանանք թէ՝ տեղւոյն Ե-
րիտասարդութիւնը տաք չէ եկեղե-
ցիին հանդէպ։ Այս ցաւալի պարագան
կը յուսանք թէ կ'ուղղուի տակաւ և
փոխանակ կիրակի առաւօտները սրբ-
ճարաններու մուխը կըլլելու, այսու-
հետեւ պիտի փափաքին եկեղեցւոյ
խունկն ու ծուխը վայելել։

— Դարձեալ Ատաբաղարէն մեզի
կը գրեն թէ՝ Փանեան տիկին վարժու-
հին Պոլիս գտնուած միջոցին tête-à-tête
խօսակցութիւն մը ունեցած է իր նախ-
կին նշանածին հետ։ (Հին մուհապէթ-
ները չեն մոռցուիր. Ծ. Խ.)։

Արտօնագիր ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏԳԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

Պապը այլ ճատոյտի, քիւ 53

ՖԷՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԷՆ

ԿԱՅՍ. ԹԱԴ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆՈՒԱԾ 4860 ԻՆ Ի ՎԻԷՆԱ

ՆԵԱՆՔԻ ՃԻՒՂ

Դրամագրուիս եւ Պահեսի գումար

31,008,000 ՖՐԱՆԲ

ՀՐԻՆՆԻ ՃԻՒՂ

Դրամագրուիս եւ Պահեսի գումար

47,000,000 ՖՐԱՆԲ

ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ ամէն տեսակ շէնք, ապրանք եւ կարասիք :

ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կը կնքէ ամէն տեսակ ապահովագրութիւնք մարդկային կեանքի վրայ :

ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ, ամէն տեսակ ապրանք՝ շոգե- նաւի՝ եւ առագաստանաւի վրայ :

Ընկերութեանս գրամատունն է ՔՐԷՏԻ ԼԻՕՆԷ, Ընդհանուր գործակալութեան գրասենեակն է Պոլիս, Ալեանաք խան, Թիւ 11 - 16 :

Ընկերութիւնս կ'ընդունի ի գաւառս պատուաւոր ներկայացուցիչներ :

Լիազօր ներկայացուցիչ

Գ. ՖԷՐԱՏԵԱՆ

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԶԱՆՊԵՐՁԵՂԹՆԱԹ

Արանց, Կանանց եւ Տղայոց

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱԹ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ ԸՆԿ.

Կ. Պոլիս, Սուլթան Համալ, Թօփալեան խան

Սոյն վաճառատունը, որ տարիներէ ի վեր իր ուղղութեամբ, ապրանաջ տոկունութեամբ եւ գիներու անմիջեւ թափանցութեամբ շահած է բոլոր իրեն զիմող յաճախորդաց վստահութիւնը, այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր հագուստներու, կանանց թելընդերու եւ տղայոց շիք եւ գիմացկուն փոքրիկ ներու ճոխ միջերք մը պատրաստ ունի, որ ջերմապէս կը յանձնարարուի ամէն պնոնց, որոնք պէտք ունին ներկայ եղանակին հագուստի եւ ուրիշ նմանօրինակ պիտոյից :

Սակարկութիւն չկայ, Թիւր 2 զրշ. է :

Գաւառներէն յանձնարարութիւնք փութով կը կատարուին : 50-8

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ


ԸՆՏԻՐ, ԱԺԱՆ

ԹԻՅԻ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐ

ԵՒ

ՄԻՇՏ ԱԺԱՆ ՈՒ ԹԱՐՄ ԵՆ

ՀՈՏԱԻՏ ԹԻՅԵՐ



Հ Է Ր Ճ Ա Յ Ի

ԱՊԱՌԻԿԻ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Հէրճայի մեծ վաճառատունը՝ գոհարեղէններու ոսկի և արծաթ շղթայներու, զրպանի պատի և քօնսօլի ժամացոյցներու մասնաւոր վաճառումէն զատ՝ իր բազմաթիւ յաճախորդներու վստահութենէն քաջալերուած, այս անգամ կը փութայ յայտարարել թէ՝ ամէն եղանակի յատուկ վերջին նորաձեւութեան վրայ պատրաստունի արանց, կանանց և տղայոց համար ամէն տեսակ հագուստներ ու անձրեւի համար մուշամպա վերարկուններ, նաև ճերմակեղէններ, ֆանթէզիներ և թօաֆիէներ, ամերիկեան կօշիկներ։ Ունի նաև կահկարասի, ձեղունի լամպարներ, մահճակալներ, եւրոպական ու անգղիական զորգեր, գետնի մուշամպաներ, կրամօֆօններ ու պիսիկէթներ՝ ամենավերջին կատարելութիւններով։

Հէրճայի վաճառատունը մայրաքաղաքիս մէջ միակն է, որ չահած է հանրութեան վստահութիւնը և գոհունակութիւնը իր ապրանքներու առկունութեան և ոսկիներու մաքրութեան՝ ձեւաւորութեան և աժանութեան համար։

Ա Պ Ա Ռ Ի Կ

Միայն թէ գնուած ապրանքին հարիւրին 20ը կանխիկ, իսկմնացեալ գումարին համար շաբաթական հարիւրին 5 վճարմամբ պատրաստ է հայթայթել։

Վաճառատունս հաստատուած է

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐՁՈՑ ՄԵԾ ՓՈՂՈՅ ԹԻԻ 13

Անգամ մը այցելելու բաւական է համոզուելու համար թէ՝ Հէրճայի անմրցելի կազմակերպութեամբ մը ի վիճակի է այսօր գոհացնել իր ամենէն դժուարահաճ յաճախորդները։

Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ՉԿԱՅ

50-4

Շաբաթական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են։